

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0015, Սուրբ Գր. Լուսավորիչ 9

հեռ. (+374 11) 400 400, էլ. փոստ՝ info@ucom.am

[Ինտերնետային կայք՝ www.ucom.am](http://www.ucom.am)

Հաշվետվություն թիվ 3, 05.05.2020թ.

1. Սույնով տեղեկացնում ենք, որ 15.01.2020թ.-ից «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վերակազմավորվել է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության: Վերակազմավորման արդյունքում «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մանակիցների բաժնեմասերը փոխարկվել են բաժնետոմսերի և տեղաբաշխվել են «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի միջև:

2. «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ 25.11.2019թ.-ի հիմնադիր ժողովի որոշումով ձևավորվել է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը՝ հետևյալ կազմով.

Արամ Սուրենի Խաչատրյան,
Գուրգեն Գագիկի Խաչատրյան,
Արտյոմ Գագիկի Խաչատրյան,
Ահարոն Սահակի Լևոնյան,
Ալեքսանդր Հովիկի Եսայան,
Սարգիս Սամվելի Կարապետյան,
Արա Սերգեյի Խաչատրյան:

3. «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի՝ 14.04.2020թ.-ի որոշումով ընկերության տնօրենների խորհրդի նախագահ է ընտրվել Գուրգեն Խաչատրյանը, իսկ ընկերության գլխավոր տնօրեն նշանակվել է Արա Խաչատրյանը:

4. «Յուքոմ» ՓԲԸ-ի իրավանախորդ «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող «Վիմպել-Կոմունիկացի» ՀԲԸ-ի միջև «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերը «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերելու մտադրության մասին նախնական բանակցությունների արդյունքում 30.12.2019թ.-ին դիմում է ներկայացվել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով՝ համակենտրոնացման թույլտվություն ստանալու համար: Նշված թույլտվության տրամադրումից հետո «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերի ձեռքբերման գործընթացը

կշարունակվի, ինչի մասին «Յուքոմ» ՓԲԸ-ն սահմանված կարգով կներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ կցելով անհրաժեշտ փաստաթղթերը:

5. «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը շարունակում է իր բնականոն գործունեությունը: Ընկերությունը համալրված է որակյալ մասնագետներով, որոնք լիարժեք վերահսկում են ընկերության բոլոր գործառույթները: